«ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ № 135

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| | |
|---|---|
| Թեմա՝ | Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում |
| ԱՌԱՐԿԱ՝ | Աշխարհագրություն |
| ՈՒսուցիչ՝ | «Երևանի Վարդանանց ասպետներ № 106 հիմնական դպրոց» ՊՈԱԿ<br>Գրիգորյան Սուսաննա Յուրիկի |
| Վերապատրաստող՝ | Շաշիկյան Սամսոն |

Երևան 2022թ.

Բովանդակություն


1. Ներածություն 3

2. Արժեքային համակարգ: Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը դպրոցում 4

3. Արժեքային համակարգի ձևավորումը աշխարհագրության դասերին 11

4. Եզրակացություն և առաջարկություններ 14

5. Օգտագործված գրականության ցանկ 16

## 1. Ներածություն

Մարդկության պատմության ընթացքում, մարդկային հասարակությունների սկզբնական կազմավորումներից (ցեղախմբեր, համայնքներ, ազգեր, ժողովուրդներ, պետություններ) մինչև մեր օրերը գործել են և գործում են որոշակի կանոններ, նորմեր և օրենքներ, որոնց միջոցով կանոնակարգվում են դրանց ներքին (միջանձնային, ընտանեկան, կրոնական, աշխատանքային, կառավարություն և հասարակություն և այլն) և արտաքին (ցեղախմբերի, համայնքների, պետությունների միջև) հարաբերությունները: Այդ բոլոր հարաբերությունների հիմքում ընկած են տվյալ ժամանակաշրջանին ու հասարակարգին հատուկ արժեքային համակարգերը:

Յուրաքանչյուր հասարակական կազմավորում (պետություն) ելնելով իր շահերից (աշխարհաքաղաքական դիրքից, ռազմաքաղաքական իրավիճակից, տնտեսությունից, որդեգրած ներքին և արտաքին քաղաքականությունից և այլ հանգամանքներից) ստեղծում է իր օրենքները (համակեցության կանոնները), որոնց պահպանումը պարտադիր է բոլոր քաղաքացիների (հասարակության անդամների) համար և, ենթադրվում է, պետք է բխեն ընդհանուրի շահերից: ՈՒստի անհրաժեշտ է, որպեսզի հասարակությունը, նրա անդամները որոշակի բարոյահոգեբանական արժեքների, որ նույնն է, թե որոշակի արժեքային համակարգի կրողները լինեն: Հենց այստեղ էլ մատաղ սերնդի դաստիարակության, նրա մոտ համապատասխան արժեհամակարգ ձևավորելու խնդիր է առաջանում: Այս խնդիրն արդիական է բոլոր ժամանակների, պետությունների ու ժողովուրդների համար: *Այն հատկապես արդիական է մեր երկրի ու ժողովրդի համար:*

Անհերքելի է, որ սովորողների անձի ավելի համակարգված և խորը զարգացումը տեղի է ունենում հանրակրթության բնագավառում: Դրանով պայմանավորված՝ բարձրանում է դպրոցականների արժեհամակարգի նպատակաուղղված ձևավորման այժմեականությունը: Սակայն, չնայած դեռահասների և երիտասարդների արժեքային համակարգի մակարդակի ձևավորման խնդիրներին նվիրված բազմաբնույթ աշխատանքների առկայությանը, բավական քիչ են առանձին ուսումնական առարկաների, մասնավորապես «Աշ-

խարհագրություն» առարկայի, դասավանդման շրջանակներում արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված համալիր վերլուծությունները [3]:

Այս աշխատանքով փորձ է արվել որոշ գծերով տալ «Աշխարհագրություն» ուսումնական առարկայի տեղը սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործում:

## 2. Արժեքային համակարգ: Սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորումը դպրոցում

ա) Արժեքային համակարգ

Յուրաքանչյուր անհատի կյանքում արժեքներն այն հիմնական կատեգորիան են, որ որոշում են նրա վարքի ուղղվածությունը և արարաքների իմաստը: ՈՒստի հումանիտար գիտություններում «արժեք» հասկացության մեկնաբանությունը հիմնականում բնորոշվում է անհատի կողմից դրա իմաստավորման, առանձին վերցրած անհատի նորմերով և իդեալներով:

Ըստ գերմանացի փիլիսոփա և սոցիոլոգ Մաքս Վեբերի՝ արժեքն անհատի գործունեության ծանրակշիռ կողմնորոշիչ է: Մեկ գերմանացի փիլիսոփա Հենրիխ Ռիկկերտը նույնպես նշում է արժեքների առանձնահատուկ դերը՝ մատնանշելով մարդկային գոյության անիմաստությունը առանց անհատի մոտ իդեալական կեցության որոշակի բնութագրերի [3]:

Մարդու արժեքային կողմնորոշման համակարգը դինամիկ, փոփոխվող բնույթ ունի, քանի որ էապես պայմանավորված է ինչպես փոփոխվող սոցիալական միջավայրով, այնպես էլ անձի զարգացվածության արդի մակարդակով [3]:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ունի բավական լայն ըմբռնում: Առավել ընդունված է, որ այն մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր-կրոնական, իմացական, մշակութային և ազգային արժեքների համախումբ է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակի ոչ մանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգը ամբողջական է և ավարտուն բոլոր համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում[1]:

բ) Արժեքային համակարգի ձևավորումը դպրոցում

Աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշիչում որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությանը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում են արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը:

Դպրոցական կյանքում սովորողի անձի արժեքային համակարգի ձևավորման գործընթացը մանկավարժական գործունեության ուղղություններից մեկն է և իրենից ներկայացնում է կայուն, հաստատուն իր բոլոր բաղկացուցիչների համագործակցությամբ մոդել[3]:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնցից արժեքների ձևավորման առումով մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես անգնահատելի է լեզվի ու գրականության դերը (այդ թվում՝ օտար) [1]: Աշակերտների արժեհամակարգի ձևավորման գործում իրենց առանձնահատուկ տեղն ունեն «Պատմություն», «Կրոնի պատմություն» և «Աշխարհագրություն» ուսումնական առարկաները:

Արժեհամակարգի մեջ կուտակված անցյալի փորձի յուրացումը աշակերտների մոտ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում, ինչպես նաև սեր և հոգատարություն հայրենի բնաշխարհի նկատմամբ: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքներն աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների[1]:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր՝ ժողովրդագրական, ազգային-կրոնական, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլ հանգամանքների ազդեցության ներքո: Հաշվի առնելով այս և այլ հանգամանքները՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրողաբար յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն ու հարաբերությունը աշխարհի նկատմամբ և ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան և այլ կառույցներ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն որպես տեղեկատվության աղբյուրներ, այլև որոշակի կերպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ տեղեկատվական աղբյուրներից «հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտներն իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի գծերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը և այլն[1]:

<u>Արժեհամակարգի ձևավորման վրա ազդող գործոնները</u>

Աշակերտի արժեհամակարգի ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումն ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջվայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ

չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով:

Աշակերտի արժեհամակարգի ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևովորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական այնպես էլ բացասական մոդելներ: Ընդ որում՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի ուրագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբարար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն[1]:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի

միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործել ըստ նպատակի:

Արժեքներից մեծագույնի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար հայ գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: Կարելի է, հիշատակել մեր «Սասունցի Դավիթ» էպոսը, Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք», Ռաֆֆու «Սամվել», «Կայծեր», «Խենթ», Մուրացանի «Գևորգ Մարզպետունի», Ծերենցի «Երկունք Թ դարու», «Թորոս Լևոնի», Սերո Խանզադյանի «Մխիթար Սպարապետ», Բագրատ Այվազյանի «Աշոտ Երկաթ», Խաչիկ Դաշտենցի «Խոդեդանը», «Ռանչպարների կանչը» վեպերը, Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» պոեմը, Մուշեղ Գալշոյանի պատմվածքները և այլն:

Այս ստեղծագործությունների ընթերցումը, դրանցում նկարագրված պատմական իրադարձությունների, դրվագների նկարագրությունն ու վերլուծությունը, հերոսների կերպարների, նրանց գործողությունների, անձնազոհության, հայրենանվիրության, պետականամետության լայնախոհության, արիության, հաստատակամության ու հնարամտության ինչպես նաև թերությունների վերհանումը և քննարկումն օրինակ են հանդիսանում աշակերտների համար:

Հանուն հայրենիքի ու հավատքի, մեր ազգային ինքնության պահպանման համար անձնազոհ պայքար մղած, թշնամու դեմ ամուր կանգնած մեր նախնիների և նորօրյա հե-

ռոսների կյանքին ու գործունեությանը ծանոթանալով աշակերտներն ակամայից տոգորվում են հայրենասիրությամբ, ձգտում նմանվել նրանց:

Գրական շատ ստեղծագործություններում նկարագրվում են նաև մեր հայրենիքի (պատմական և ներկա) բնապատկերները, գետերը, լեռներն ու դաշտերը, օրինակ՝ Ռաֆֆու «Սամվելում»՝ «Արարատյան դաշտի առավոտը» հատվածը, ինչը ճանաչողական մեծ նշանակություն ունի, զարգացնում է աշակերտների երևակայությունը, այդ վայրերը տեսնելու, այնտեղ լինելու ցանկություն առաջացնում, նաև տեղեկություններ են տրվում մեր նախնիների կենցաղի ու բարքերի, ավանդույթների և ծեսերի մասին, ինչը ևս դաստիարակչական մեծ նշանակություն ունի: Ինչպես Ռաֆֆին է ասում «Ով չի ճանաչում իր հայրենիքը նա չի կարող ճշմարտապես սիրել այն»:

<u>ՈՒսուցչի դերը արժեհամակարգի ձևավորման գործում</u>

ՈՒսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում[1]:

ՈՒսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ

է լուծում հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին հաջողություններ ձեռքբերել, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ» [1]:

Ելնելով վերոգրյալից կարող ենք արձանագրել, որ նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունեն հայ դրպրոցն ու ոսուցիչը, գերխնդիր ունենալով կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ:

Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և

կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցությանը, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները[2]:

### 3. Արժեքային համակարգի ձևավորումը աշխարհագրության դասերին

Աշխարհագրությունը առանձնահատուկ ուսումնական առարկա է, այն հնարավոր չէ միանշանակ դասել բնագիտական կամ հասարակական գիտություններին: Աշխարհագրություն առարկայի բովանդակության հիմքում ընկած է հասարակության կենսագործունեության և բնության հետ համագործակցության ուսումնասիրության աշխարհագրական համալիր մոտեցումը:

Աշխարհագրությունը զարգացնում և ընդլայնում է սովորողի մտահորիզոնը, նրան դաստիարակում է որպես պատասխանատու, աշխարհագրական օրինաչափություններին տեղյակ, տնտեսող (խնայողական) մտածողության, բնապահպանական գրագետ գործունեություն իրականացնող, տարբեր երկրների և դրանց բնակիչների մասին լավատեղյակ քաղաքացիներ: ՈՒսումնական այս առարկայի յուրացման արդյունքում դպրոցականների մոտ ձևավորվում են բնության, մարդու, տնտեսական գործունեության, աշխարհում, հայրենիքում, մարզում, ծննդավայրում տիրող բնապահպանական վիճակի նկատմամբ

արժեքային կողմնորոշումներ[3]:

Աշխարհագրության դպրոցական դասընթացը դպրոցականների արժեքային կողմնորոշման ձևավորման մեծ հնարավորություններ է ստեղծում:

Նախատեսվում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է.

- լինի, ազնիվ, հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,

- կարևորի ազգային-պետական մտածողություն և գործելակերպ ուեենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք,

- ունենա ազգային ինքնագիտակցություն,

- կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

- ճանաչի իր հայրենիքը, նրա բնությունը, լավատեղյակ լինի նրա տնտեսության ճյուղերին և առանձնահատկություններին, հոգատար ու նախանձախնդիր լինի հայրենի բնաշխարհի և դրա պահպանման նկատմամբ,

- ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում,

- գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում անցյալի փորձից դասեր քաղելու անհրաժեշտությունը,

- գիտակցի իր ժոդովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը և այլն[2]:

Եթե վերը թվարկածը մի նախադասությամբ ձևակերպենք, ապա դպրոցն ավարտող աշակերտը պետք է լինի իր երկրի քաղաքացի բառի ամենալայն իմաստով:

Սովորողների մոտ այս որակների ձևավորման գործում, ինչպես արդեն նշված է վերը, ի թիվս ուսումնական մյուս առարկաների իր ուրույն տեղն ունի աշխարհագրությունը:

Որպեսզի ուսումնական առարկան, մեր պարագայում՝ աշխարհագրությունը «կարո-

ղանա» իր մասով իրականացնել աշակերտների մոտ բարձր արժեքային համակարգի և բարոյահոգեբանական որակների ձևավորումը, պետք է նրանց մոտ հետաքրքրություն ու սեր առաջացնել նրա նկատմամբ: Այս տեսակետից արդյունավետ են արտադասարանական պարապմունքները, նպատակային էքսկուրսիաները, թեմատիկ վիկտորինաների կազմակերպումը, որը հնարավորություն է տալիս ստուգել և գնահատել մատուցված նյութի յուրացման աստիճանը՝ միաժամանակ բազմազան ու հետաքրքիր դարձնելով այդ գործընթացը:

Այդ նպատակով ՌԴ Նիժնի Նովգորոդ քաղաքի դպրոցներում հետաքրքիր և հաջողված փորձ են կատարել. պատմողական, դիտողական և գործնական մեթոդներից բացի աշխարհագրության դասավանդման գործընթացում կիրառելով խաղային տեխնոլոգիաներ: Այդ փորձի կատարման համար հիմք է հադիսացել հետևյալ նկատառումը:

Խաղային գործունեությունը երեխայի բնական պահահանջմունքն է: ՈՒսումնական խաղը նոր գիտելիքների, գործունեության ձևերի, աշխարհի նկատմամբ արժեքային վերաբերմունքի յուրացման ամենաարդյունավետ մեթոդներից մեկն է: Այն անհրաժեշտ է աճող սերնդին նախապատրաստելու կյանքի տարբեր իրավիճակներին և կարող է դառնալ ուսուցման և դաստիարակության ակտիվ մեթոդներից մեկը: Աշխարհագրության դասերին սովորողների խաղային գործունեությունը կազմակերպելով, ուսուցիչն աշակերտներին օգնում է ավելի մատչելի ձևով յուրացնել նոր նյութը՝ նրանց շահադրդելով առարկայի հետագա ուսումնասիրությանը: Ձգտելով հասնել առաջադրված նպատակին, երեխաները ջանում են ուշադիր լինել, նախաձեռնություն, ըմբռնողություն և կամք են դրսևորում: Խաղի ընթացքում աշակերտը պասիվ ունկնդրից վերածվում է ուսումնական գործընթացի ակտիվ մասնակցի, համատեղվում են գիտելիքներն ու հմտությունները: Խաղը նաև դրական «կլիմա» է ձևավորում դասարանում, ինչն օգուտ է բերում ոչ միայն աշակերտներին, այլև ուսուցչին[4]:

Հարկ է նշել, որ խաղը կարող է օգնել ոչ միայն իմացական հետաքրքրությունների, այլև՝ բարոյահոգեբանական արժեքների ձևավորմանը: Յուրաքանչյուր խաղ ունի կանոններ, որոնք չի կարելի խախտել, ինչը կարգապահ է դարձնում, դաստիարակում է ազ-

նվություն, պահանջկոտություն սեփական անձի նկատմամբ, տոկունություն, կամք, թիմում աշխատելու, այլոց կարծիքը լսելու և հարգելու ունակություն: Աշխարհագրությունը գիտություն է, որի միջոցով կարելի է սովորողներին ներարկել սեր առ հայրենիքը, հոգատար վերաբերմունք սեփական երկրի, մարզի, բնակավայրի նկատմամբ, սովորեցնել գնահատել և հարգել մարդկանց, նրանց աշխատանքը, մշակույթը և ավանդույթները, հանդուրժողական վերաբերմունք դրսևորել նրանց ազգային ու կրոնական պատկանելությանը: Կարևոր է, որ դպրոցում սովորելու տարիներին դեռահասին օգնեն գլուխ հանել անձնական բարոյական և արժեքային կողմնորոշիչներում, սովորեցնել վերահսկել սեփական վարքը և պատասխան տալ արարքների համար: Աշխարհագրության դասավանդման մեթոդիկայում գոյություն ունեն սովորողներին բարոյահոգեբանական արժեքների ներարկման տարբեր միջոցներ: Խաղային տեխնոլոգիաների միջոցով հնարավոր է մոդելավորել կենսական և ուսումնական խընդրահարույց իրավիճակները, խաղային գործողությունները կենտրոնացնել իրական խնդիրների, հարաբերությունների շուրջ: Ժամանակակից բարդ խնդիրները՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, բնապահպանական դպրոցականների համար ավելի հասկանալի են դառնում:

Բարոյահոգեբանական արժեքների փուլային ձևավորման հիման վրա մշակված աշխարհագրական խաղերի համակարգի մանկավարժական փորձը հաստատել է մշակված մեթոդիկայի արդյունավետությունը, ինչը դրական դինամիկայով է արտահայտվել սովորողների անձնական որակների վրա: Սովորողների արժեքային համակարգի ձևավորման ուսումնական ակնկալվող արդյունքները արտահայտվել են նրանց պատասխանատու քաղաքացիական դիրքորոշմամբ, մարզում բնակվող ժաղովուրդների մշակութային արժեքների և հոգևոր ավանդույթների գիտակցված յուրացմամբ, ժամանակակից համընդհանուր հիմնախնդիրներին, այդ թվում՝ բնապահպանական բնույթի, սեփական մասնակցության գիտակցմամբ, քաղաքի, շրջանի, դպրոցի, դասարանի շրջակա միջավայրի բարեկարգմանը ակտիվ մասնակցություն ունենալու պատրաստակամությամբ[4]:

## 4. Եզրակացություն և առաջարկություններ

Աշխարհագրության դասընթացը ուսումնական մյուս առարկաների հետ համադեր-

մամբ նպաստում է, հայրենիքին նվիրված, ազգային մշակույթի, ավանդույթների և քրիստոնեական արժեքների կրող, բազմակողմանի զարգացած արժեհամակարգ ունեցող քաղաքացիների դաստիարակությանն ու ձևավորմանը:

Առաջարկում եմ.

1. Աշխարհագրություն առարկայի դասվանդումն առավել հետաքրքիր և մատչելի դարձնելու նպատակով, հնարավորության դեպքում, մշակել առարկայի մատուցման խաղային մեթոդը՝ համագործակցելով ՌԴ Նիժնի Նովգորոդի դպրոցների հետ: Կարծում եմ, որ այս մեթոդի շրջանակներում է «տեղավորվում» աշխարհագրական վիկտորինան: Դպրոցական տարիներին այսպիսի խաղ էր տարածված. աշակերտներից մեկը մի քաղաքի անուն էր տալիս, մյուսը այդ անվան վերջին տառով այլ քաղաք էր ասում և այդպես շարունակ, մինչև մրցողներից մեն ու մեկի պարտվելը: Կան էլի նմանատիպ խաղեր:

2. Ստեղծել պատմական և ներկա Հայաստանի աշխարհագրական անունների (լեռներ, գետեր, բնակավայրեր) հայկական անունների ծագման ստուգաբանական բառարան: Օրինակ՝ Հրազդան անվան ծագման մի տարբերակ. բարդ բառ է՝ բաղկացած հուր, ազն (զարմ) և դան (դոն) բառերից, որտեղ հուրը կրակն է, ազնը՝ (արքայազն, իշխանազն, Հայկազ և այլն), իսկ դան-դոն-ը հին հայերեն կամ հնդևրոպական արմատ է և նշանակում է ջուր, այսինքն՝ հրից ծնված ջուր կամ գետ: Այս վարկածի համաձայն վաղնջական ժամանակներում հրաբխից ժայթքած լավան փոխել է գետի հունը և այն ժամանակվա մարդիկ, հայերիս նախնիները «նոր» գետը կոչել են Հրազդան: Սա ևս մեկ անգամ հաստատում է, որ հայերը Հայկական լեռնաշխարհի բնիկներ են:

3. Կազմակերպել Հայաստանի աշխարհագրություն և հայ գրականություն, Հայաստանի աշխարհագրություն և հայոց պատմություն թեմատիկ համատեղ դասեր:

## 5. Օգտագործված գրականության ցանկ

1. Իննա Փարեմուզյան, Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում:

2. Արմինե Գրիգորյան, Ազգային արժեքային համակարգի ձևավորումը Հայոց պատմության դասերին, Ավարտական հետազոտական աշխատանք:

3.Синицина А.А., Формирование ценностно-смыслобвых ориентаций учащихся в процессе изучения географии:

4. Шевченко И.А., Кривдина И.Ю., Горшкова И.А,КаврижкинаД.А., Формирование духобно-нравственных ценностей в курсе географии на основе игровых технологий.

Международный журнал прикладных и фундаментальных исследований.-2016-№8-2